ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

06.....մարտի.....2019 թվականի N....50-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 45-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ՄԱՅՆԻՆԳ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊ ընկերության 2019 թվականի փետրվարի 26-ի թիվ 02-02 գրությունը, Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. «ՄԱՅՆԻՆԳ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման թիվ 19 հրաժարման հավաստագիրը:

2. Ուժը կորցրած ճանաչել «ՄԱՅՆԻՆԳ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊ ընկերությանը ՀՀ Վայոց Ձորի մարզի Վաղաշենի բազմամետաղների հանքերևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2016 թվականի նոյեմբերի 02-ին տրամադրված ԵՀԹ-29/228 թույլտվությունը, լուծել թիվ Պ-228 ընդերքօգտագործման պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին,

- ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝

ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Տիգրան Արզումանյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

3/6/2019

X

VERIFIED OCSP 06-Mar-19 13:14:09 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118